

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Օժտածության խնդիրը հետազոտման բավական բարդ դաշտ է, որտեղ կան բազմաթիվ չլուծված հարցեր: Առ այսօր նույնիսկ չկա որևէ «ճիշտ» սահմանում, որը կբնորոշի օժտված երեխային, ինչպես նաև կան բազմաթիվ խոչընդոտներ օժտված երեխաների բացահայտման, նրանց հարմարումը և դաստիարակումը սոցիալական միջավայրում ճիշտ կազմակերպելու հետ կապված: Այս աշխատանքի շրջանակներում նպատակահարմար ենք համարում կատարել պատմական էքսկուրս՝ վերոհիշյալ խնդրի էությունը ավելի լավ պատկերացնելու համար:

Օժտվածության խնդրի ուսումնասիրության մեջ մեծ ներդրում ունեն եվրոպական գիտնականները՝ մասնավորապես փորձարարական հոգեբանության հիմնադիրները՝ Գ. Ֆեխներ, Գ. Յելմհոլց, Դ. Կետտել, Է. Դյուրկգեյմ, Վ. Վունդտ և այլն: Սակայն հատկապես Ֆ. Յելտոնը հանդիսացավ օժտվածության խնդրի լուծման փորձարարական մոտեցման հիմնադիրը և դրա ուսումնասիրության մեթոդիկայի ստեղծողը:

19-րդ դարի վերջին տասնամյակում, եվրոպայում գերիշխում էր օժտվածության երևույթի ուսումնասիրության գենոտիպ մոտեցումը, որը ելնում էր ժառանգական նախատրամադրվածությունից: Ֆ. Յելտոնը¹ գենոտիպ մոտեցման ներկայացուցիչը, ուսումնասիրել է մոտ հարյուր հայտնի մարդկանց կենսագրությունը (Դարվին, Բախ, Նյուտոն)՝ նպատակ ունենալով պարզել օժտվածության ժառանգական փոխանցման երևույթը: Նա ուսումնասիրել է միայն տղամարդկանց գիծը և գտել, որ հայտնի մարդկանց եղբայրների 23%-ը և տղաների 36%-ը նույնպես հայտնի մարդիկ են դարձել: Նշենք նաև, որ հենց ինքը՝ Ֆ. Յելտոնը, Չ. Դարվինի հորեղբոր տղան է: Այս ուսումնասիրություններից նա եկել է այն եզրակացության, որ օժտվածությունը ժառանգական երևույթ է և փոխանցվում է սերնդե սերունդ:

Նման մոտեցում ուներ նաև Լ. Տերմանը²: Նա, իր հետազոտությունների արդյունքում, նույնպես եկել է այն եզրակացության, որ բարձր օժտվածությունը գենետիկ պայմանավորվածություն ունի:

Սակայն կարևորելով գեների դերը չի կարելի անտեսել նաև սոցիալական գործոնները և այն հանգամանքը, որ շրջապատող աշխարհը կարող է

¹ Galton F., Hereditary Genius, London, Macmillan, 1869.

² Terman L. M., Mental and Physical Traits of a Thousand Gifted Children. Genetic Studies of Genius, vol. 1, 1925.

ազդել գենետիկական կառուցվածքի վրա: Եվ, ինչպես նշում է Էլլեն Վիները³, որը իր գրքում մի մեծ գլուխ է նվիրել օժտված երեխաների հետազոտությանը, հասկապես զույգ, գիտությունը մինչև օրս չի կարող հստակ սահմանազատել գեների և շրջապատող միջավայրի ազդեցությունը:

Եվրոպական գիտության մեջ 20-րդ դարը լի է օժտվածության խնդրի բազմաթիվ հետազոտություններով: Սակայն դրանք հիմնականում վերաբերվում են մարդու ինտելեկտի, ընդունակությունների ուսումնասիրությանը, որտեղ մեծ ներդրում ունեն ժ. Պիածեն, Ա. Բինեն, Չ. Սպիրմենը, Լ. Տերստոունը, Ռ. Կետտելը և այլոք:

Չնայած, որ օժտվածության խնդրի ուսումնասիրությունը վերոհիշյալ ժամանակահատվածում սահմանափակվում էր մարդու ինտելեկտուալ զարգացումը հետազոտելով, այնուամենայնիվ, այդ հետազոտությունները շատ կարևոր էին ինչպես օժտվածության ֆենոմենի առանձնահատկությունների ճանաչման համար, այնպս էլ մարդու դաստիարակման համար: Վերջապես այդ հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ օժտվածության երևույթը չի սահմանափակվում միայն ինտելեկտի ուսումնասիրությամբ: Ինտելեկտը հանդիսանում է օժտվածության չափանիշներից միայն մեկը: Իսկ մյուս, կարևոր և որոշիչ չափանիշը կրեատիվությունն է (ստեղծագործական ընդունակությունը): Այդ համոզմանը եկան գիտնականները Լ. Տերմանի և Կ. Կոկսի դասական աշխատանքներից հետո:

1926թ-ին Լ. Տերմանը և Կ. Կոկսը⁴ վերլուծեցին 282 հայտնի մարդկանց կենսագրությունը և հիմնվելով նրանց հաջողությունների վրա, 17-26 տարեկան ընկած ժամանակահատվածում, փորձեցին գնահատել ինտելեկտի գործակիցը (IQ):

Հայտնի մարդկանց գիտելիքների և հմտությունների տիրապետման համեմատական հետազոտությունները սովորական երեխաների հետ, ցույց տվեցին, որ հայտնի մարդկանց ինտելեկտի գործակիցը բավականին բարձր է միջինից:

Առավել հետաքրքիր է 1921թ-ի Լ. Տերմանի կողմից Կալիֆորնիայում կազմակերպած հետազոտության արդյունքները: Լ. Տերմանը և Կ. Կոկսը⁵ Կալիֆորնիայի 95 միջնակարգ դպրոցներից ընտրել էին 1528 տղաներ և աղջիկներ՝ 8-ից 12 տարեկան, որոնք ունեին ինտելեկտի գործակցի 135 միավոր: Ինտելեկտի մակարդակը որոշվում էր Ստենֆորդ Բինեի թեստով:

Պարզվել էր, որ ինտելեկտուալ օժտվածություն ունեցող երեխաները իրենց զարգացման մեջ առաջ են անցնում հասակակիներից միջինում երկու

³ Winner Ellen, Gifted children, Myths and Realities, Basic Books N1. 1998.

⁴ Психология одаренности, Под ред. Д. В. Ушакова, М. 2000, с. 20.

⁵ Նույն տեղում, էջ 21-22:

տարով: Ինտելեկտի գործակցի ստուգումը անցկացվել էր երեք փուլով՝ 1927-1928թթ., 1932-1940թթ. և 1951-1952թթ.: Վերջինը իրականացվել էր Դ. Ֆելդմանի⁶ կղմից՝ հետազոտությունները սկսելուց 60 տարի անց: Նա ստուգել էր Լ. Տերմանի կողմից ընտրած մարդկանց հաջողությունները: 800 տղամարդ, որոնք մտնում էին այդ ընտրվածների մեջ և ունեին 135 ինտելեկտի գործակից, 50 տարեկան հասակում ունեին հրատարակած 67 գիրք (21 գեղարվեստական և 46 գիտական մոնոգրաֆիաներ), 78 ամդամներ դարձել էին փիլիսոփայության դոկտորներ, 48-ը՝ բժշկության դոկտորներ և այլն: 47 տղամարդկանց անունները ընդգրկվել էին «1949թ-ի Ամերիկայի լավագույն քաղաքացիներ» տեղեկագրքի մեջ: Այս ցուցանիշները 30 անգամ գերազանցում էին համեմատական խմբի ցուցանիշները: Բոլոր ինտելեկտուալ երեխաները հաջող են ավարտել դպրոցը, մեծ մասը ստացել է համալսարանական կրթություն, իսկ 200 մարդ դարձել է գիտության դոկտոր:

Սակայն, ինչ վերաբերվում է ստեղծագործական հաջողությունների արդյունքներին, ապա դրանք այդքան էլ միանշանակ չէին: Լ. Տերմանի ընտրած ոչ մի վաղ ինտելեկտուալ չի դրսևորվել որպես տաղանդավոր ստեղծագործող ոչ մի բնագավառում: Նրանից ոչ մեկը էական ներդրում չի ունեցել համաշխարհային մշակույթի զարգացման մեջ:

Այսպիսով, ինտելեկտուալ զարգացած երեխան շատ հաջողությամբ ադապտացվում (հարմարվում) է հասարակության մեջ: Ինտելեկտը ոչ թե խոչընդոտում, այլ հանդիսանում է դեմոկրատական հասարակության մեջ հաջողության հասնելու անհրաժեշտ պայմանը: Սակայն ինտելեկտի բարձր մակարդակը չի խոսում այն մասին, որ տվյալ անձը կհասնի ստեղծագործական բարձրությունների: Այնուամենայնիվ գոյություն ունի մաս կարծիք այն մասին, որ ինտելեկտի մակարդակի և կրեատիվության (ստեղծագործական ընդունակության) միջև գոյություն ունի որոշակի կոորելացիա:

Կրեատիվության՝ որպես օժտվածության կարևոր և որոշիչ չափանիշի տեսությունը, մեծ տարածում է գտել Ջ. Գիլֆորդի⁷ աշխատանքների շնորհիվ:

Նա նշում էր երկու՝ սկզբունքորեն տարբեր մտածողական գործողությունների մասին. կոնվերգենտության և դիվերգենտության:

Կոնվերգենտ մտածողությունը գործում է այն դեպքում, երբ մարդուն, որը խնդիր է լուծում, անհրաժեշտ է գտնել միակ ճիշտ լուծումը տարբեր պայմանների դեպքում: Չնայած կոնկրետ լուծում կարող է լինել մի քանիսը, այնուամենայնիվ այն միշտ սահմանափակ է: Ջ. Գիլֆորդը⁸ նույնացրեց

⁶ Feldman D. H., The Mysterious Case of Extreme Giftedness, Chicago, 1979.

⁷ Guilford J. P., Creativity, Amer. Psychologist 5, 1950.

⁸ Նույն տեղում:

կոնվերգենտ մտածողության ընդունակությունը ինտելեկտի թեստերին, այսինքն այն թեստերին, որոնք չափում էին ինտելեկտի գործակիցը (IQ):

Դիվերգենտ մտածողությունը բնորոշվում է որպես մտածողության այնպիսի տեսակ, որը «տարածվում է բոլոր կողմերով»: Այդպիսի մտածողության ժամանակ խնդրի լուծումը կարող է տարբեր լինել և հանգեցնել անսպասելի եզրակացությունների և արդյունքների: Ձ. Գիլֆորդը գտնում էր, որ դիվերգենտ մտածողությունը կրեատիվության՝ ստեղծագործական ընդունակության, հիմքն է:

Ձ. Գիլֆորդը⁹ առանձնացրել է նաև կրեատիվության վեց չափանիշները.

1. խնդիրը նկատելու և առաջադրելու ընդունակություն,
2. մեծ թվով գաղափարներ ստեղծելու ընդունակություն,
3. ճկունություն, մշակված գաղափարները արդյունավետ դարձնելու ընդունակություն,
4. օրիգինալություն, ազդակներին ոչ միօրինակ պատասխանելու ընդունակություն,
5. օբյեկտը կատարելագործելու ընդունակություն,
6. խնդիրներ լուծելու ընդունակություն, այսինքն վերլուծելու և սինթեզելու ընդունակություն:

Ինտելեկտի և կրեատիվության միջև կապի քիչ լինելու փաստը նկատել էր նաև Լ. Տերստուդնը¹⁰: Նա գտնում էր, որ ստեղծագործական կարողությունները ակտիվանում են այն ժամանակ, երբ մարդը հանգիստ է, ուշադրությունը կենտրոնացած չէ որևէ խնդրի լուծման վրա, այսինքն այն ժամանակ, երբ մարդը գտնվում է ռելաքսացիայի վիճակում:

Կրեատիվության և ինտելեկտի կապի խնդրին անդրադարձել են նաև Ս. Վոլլախը և Ն. Կոզանը¹¹: Նրանք, հետազոտելով 11-ից 12 տարեկան երեխաների ինտելեկտը և կրատիվությունը, եկան այն եզրակացության, որ այդ երեխաների ինտելեկտի և կրեատիվության զարգացման մակարդակները տարբեր են, ինչպես նաև տարբեր են սոցիալական միջավայրին հարմարվելու, կյանքի խնդիրներ լուծելու նրանց ընդունակությունները: Ելնելով այդ հանգամանքից՝ նրանք առանձնացրին ինտելեկտի և կրեատիվության մակարդակների տարբերության չորս խումբ:

Առաջին խմբի մեջ մտնում են այն երեխաները, որոնք ունեն ինտելեկտի բարձր մակարդակ և բարձր կրեատիվություն: Այս երեխաները բնութագրվում են նրանով, որ վստահ են իրենց ընդունակությունների վրա,

⁹ Guilford J. P., Traits of Creativity, Creativity and its Cultivation, New York, 1959, p. 142-161.

¹⁰ Психология одаренности, Под ред. Д. В. Ушакова, М. 2000, с. 24.

¹¹ Wollace A., The Prodigy, New York, 1986.

ունեն աղեկվատ ինքնագնահատական, ինչպես նաև ունեն ներքին ազատություն և բարձր ինքնակառավարում: Չնայած այս ամենին, նրանք կարող են թվալ փոքրիկ երեխաներ, իսկ որոշ ժամանակ անց, կարող են պահել իրենց մեծի պես, եթե այդպես է պահանջում իրավիճակը: Նրանք դրսևորում են մեծ հետաքրքրություն ամեն նորի և ոչ սովորականի հանդեպ, ունեն մեծ նախաձեռնողականություն, բայց դրա հետ մեկտեղ հաջողությամբ հարմարվում են իրենց սոցիալական միջավայրի պահանջներին՝ պահպանելով դատողությունների և գործողությունների անձնական անկախությունը:

Երկրորդ խմբի մեջ մտնում են այն երեխաները, որոնք ունեն բարձր ինտելեկտ և ցածր կրեատիվություն: Նրանք բնութագրվում են նրանով, որ ձգտում են հաջողություններ ունենալ դպրոցում, որը դրսևորվում է բարձր գնահատականներ ստանալով: Այս երեխաները ծանր են տանում անհաջողությունները, նույնիսկ կարելի է ասել, որ նրանց մոտ գերակշռում է ոչ թե հաջողության հասնելու սպասումը, այլ վախը անհաջողությունից: Նրանք խուսափում են ռիսկի դիմելուց, չեն սիրում արտահայտել իրենց միտքը հասարակության առջև: Չսպված են, զաղտնապահ, միշտ որոշակի սահման են պահպանում իրենց հասակակիցների հետ և ունեն քիչ մտերիմ ընկերներ: Հաճախ այս երեխաները տանջվում են առանց իրենց գործողությունների, ուսման և գործունեության արդյունքների աղեկվատ գնահատականի:

Երրորդ խմբի մեջ մտնում են այն երեխաները, որոնք ունեն ինտելեկտի ցածր, բայց կրեատիվության բարձր մակարդակ: Այս տիպի երեխաները հաճախ հայտնվում են «օտարացած», «մեկուսացած» կարգավիճակում: Նրանք դժվարությամբ են հարմարվում դպրոցի պահանջներին, փորձում են զբաղմունքներ գտնել դպրոցից դուրս՝ արտադպրոցական խմբակներում, որտեղ նրանք հանգիստ պայմաններում կարող են դրսևորել իրենց ստեղծագործական կարողությունները: Նրանք ավելի տագնապային են, տանջվում են սեփական ուժերին չվստահելու զգացումից, «թերաթժեքության բարդությից»: Հաճախ ուսուցիչները նրանց բնութագրում են որպես հիմար, անուշադիր երեխաների, քանի որ նրանք հազիվ են կատարում ուսուցչի ավանդական պահանջները, չեն կարողանում կենտրոնանալ:

Վերջապես *չորրորդ խմբի* մեջ մտնում են այն երեխաները, որոնք ունեն ցածր մակարդակի ինտելեկտ և կրեատիվություն: Այս երեխաները արտաքինապես լավ են հարմարվում սոցիալական միջավայրին: Սովորաբար զրավում են «միջին» դիրք և բավարարվում իրենց դիրքով: Նրանք ունեն աղեկվատ ինքնագնահատական, առարկայական ընդունակությունները փոխհատուցվում են սոցիալական ինտելեկտի զարգացմամբ, շփվողականությամբ, ուսման մեջ պասիվությամբ:

Սեզ առավել հետաքրքրում է երրորդ խումբը: Ինչպես գիտենք, հասարակության մեջ ընդունված է այն կարծիքը, որ օժտված երեխան պետք է

լինի շուտ և արագ ընկալող, հասկացող, ամենալավը սովորի: Շատ ուսուցիչներ և ծնողներ այդ պատկերացմամբ էլ սահմանփակում են իրենց պատկերացումները օժտվածության երևույթի մասին: Ցավոք, նույնիսկ որոշ մասնագետներ, օժտված երեխա ասելով հասկանում են այն երեխային, որը մտավոր զարգացման մեջ առաջ է անցնում իր հասակակիցներից և ունի սովորելու բացառիկ ընդունակություններ: Չնայած դրան, որոշ մանկավարժների մոտ նկատվում է նաև այն միտումը, որ աշակերտին զնահատում են ոչ միայն ըստ առաջադիմության, այլ նաև ըստ ընդունակությունների: Ծնողները հաճախ կարող են լսել ուսուցիչ այն մասին, որ իրենց երեխան ընդունակ է, բայց չի սովորում, ծույլ է: Սակայն այն միտքը, որ օժտված պետք է լինի այն երեխան, որը արագ է կողմնորոշվում և շուտ ընկալում, այնուամենայնիվ գերակշռում է բոլոր մանկավարժների մոտ: Ուսուցիչները օժտված են համարում այն աշակերտներին, որոնք բոլորից արագ են լուծում դժվար խնդիրները, միշտ պատրաստ են ներկայանում դասին, որոնց կարելի է ուղարկել օլիմպիադայի մասնակցելու և հաղթանակ ակնկալել: Իսկ եթե այդ ընդունակություններին ավելանում է նաև աշխատասիրությունը, պարտաճանաչությունը, ապա այդ աշակերտները դառնում են ուսուցչի սիրելիները, պարծանքը և հպարտությունը: Իհարկե, այս երեխաները նույնպես օժտված են: Բայց կան նաև մյուսները, որոնց օժտվածությունը ոչ ոք չի ցանկանում նկատել, ավելին այն ամեն օր ոչնչացվում է ինչպես դպրոցում, այնպես էլ ընտանիքում: Իսկ դրա հետևանքով առաջացած հոգեբանական օտարացումը կարող է խոչընդոտել ինչպես ընդունակությունների, այնպս էլ անձի համակողմանի և նրդաշնակ զարգացմանը:

Այս փաստը նակատել է նաև Պ. Տորրանսը¹²: Նա, աշխատելով որպես ուսուցիչ սովորական դպրոցում, ուշադրություն է դարձրել ոչ թե գերազանց սովորողների վրա, ինչպես լինում է սովորաբար, այլ վատ սովորողների: Այստեղ նա նկատել է, որ վատ սովորող երեխաները ավելի ինքնատիպ են, յուրօրինակ: Սակայն այդ երեխաների հետ շփվելը շատ ավելի դժվար է, բայց նաև ավելի հետաքրքիր:

Ըստ Պ. Տորրանսի¹³ տվյալների, դպրոցից դուրս մնացած երեխաների 30%-ը (վատ առաջադիմության համար, չհասցնելու, անընդունակ լինելու, վատ վարքի, նույնիսկ հիմարության համար) կազմում են օժտված և գերօժտված երեխաները:

Յետաքրքրական են նաև սոցիոլոգիական տվյալները, համաձայն որի օժտված մարդիկ կազմում են բնակչության 2,5%-ից 20%-ը: Ընդհանուր օժտվածության կամ ստեղծագործական հնարավորությունների բացահայտ-

¹² В. С. Юркевич, Одаренный ребенок: иллюзия и реальность, М., 1996, с. 53.

¹³ Նույն տեղում, էջ 54:

ման համար նախատեսված թեստերի տվյալների համաձայն, բնակչության տաղանդավոր մասը կազմում է մոտ 20%-ը:

Վերջապես վերոհիշյալ փաստի մասին են վկայում նաև հայտնի մարդկանց կենսագրական տվյալները: Այսպես, Ա. Էնշտեյնը եղել է միջակ ընդունակությունների տեր աշակերտ: Նա չի տարբերվել փայլուն կարողություններով և խելացիությամբ, ինչպես ընդունված է մտածել օժտվածների մասին: Նա հեռացվել է դպրոցից վատ առաջադիմության և ոչ օրինակելի վարքի համար:

2. Դարվինին փոքր տարիքում բոլոր ուսուցիչները համարել են հիմար և կանխատեսել նրա համար ոչ փայլուն ապագա:

Նման վերաբերմունքի է արժանացել նաև փոքրիկ Պուշկինը: Նա մույնպես չի տարբերվել մյուս երեխաներից իր փայլուն կարողություններով և նյարդայնացրել է մորը իր անշնորքությամբ, ծանրաշարժությամբ:

Հայտնի մարդկանց թիվը, որոնք վաղ տարիքում աչքի չեն ընկել իրենց բացառիկ կարողություններով և որոնց մոտ նկատվել են հասարակությունից օտարացվածության, մույնիսկ վերջինիս չհարմարվելու դրսևորումներ, այդքան էլ քիչ չէ. Բեթհովեն, Վան Գոգ, Լոբաչովսկի, Չեխով, Բուլգակով և այլն:

Օժտված երեխաների մոտ հոգեբանական օտարացման զարգացման ընթացքը և ելքը կախված է նաև շրջապատից: Բարեբախտաբար, վերոհիշյալ օրինակները ունեցել են դրական ելք, սակայն լինում է և հակառակը: Օրինակ Ս. Մայլզի, Ս. Լաջոուլայի և այլոց հետազոտությունները¹⁴ ցույց են տվել, որ ինքնասպանություններ օժտված երեխաների շրջանում հանդիպում է 2,5 անգամ շատ, քան նրանց հասակակիցների: Վերջապես օժտվածությունը կարող ունենալ բոլորովին անցանկալի ուղղվածություն, այսինքն ծառայել ոչ թե ի շահ մարդկությանը, այլ հակառակը, դառնալ չարիք մարդկության գլխին, ինչին ականատես է եղել մարդկությունը (Հիտլեր, Ստալին):

Այսպիսով օժտված երեխայի սխալ ընկալումը և իմաստավորումը ևս կարող է հոգեբանական օտարացման առաջացման պատճառ հանդիսանալ: Դրա համար անհրաժեշտ է հաղթահարել հասարակության մեջ գոյություն ունեցող այն սխալ համոզմունքը, ըստ որի՝ օժտված երեխան օգնության կարիք չունի: Բացի այդ, անհրաժեշտ է նաև բարձրացնել այն ուսուցիչների պատրաստվածության մակարդակը, որոնք աշխատում են օժտված երեխաների հետ, ինչպես նաև գինել նրանց նման երեխաների անձնային առանձնահատկությունների մասին հոգեբանական գիտելիքներով:

¹⁴ А. М. Матюшкин, Д. А. Снек, Одаренные и талантливые детям // Вопросы психологии, 1982, №4.